

ՄԵՐ ԹԱՆԿԱԳԻՆ ՀԻՒՐԵՐԸ

Երևանի Հայ Պատրիարքությունը եւ Ս. Յակոբեանց Միաբանութիւնը երջանիկ առիթը ունեցան ընդունելու այցելութիւնը Երեւանի Տէր եւ Տկն. Հայկ Գալուստեաններու եւ Ազն. Տիկին Ֆլորա Սարգիսեանի:

Յարգելի հիւրերուն զիտար նպատակներէն մին էր անձնապէս այցելել Ս. Յարութեան Տաճար եւ հայկական սրբատեղիներէն ներս կատարուած նորոգութիւններուն վերահասու ըլլալ:



Ն. Ամենայատուութիւն Զ. Եղիշէ Ս. Արքեպս. Տէրտրեան եւ Տիար Հ. Գալուստեան՝ Պատրիարքարանի Դահլիճին մէջ:

Երուսաղէմ իրենց այցելութեան շրջանին (12-17 Հոկտեմբեր), Տէր եւ Տիկին Գալուֆնանք եւ Տկն. Ֆորա Սարգիսեան հիւրերը եղան Պատրիարք Ս. Հօր:

Անոնք այցելեցին Ս. Յարութեան Տաճար եւ իրենց մանաւոր գոհունակութիւնը յայտնեցին հայկական բաժինէն ներս կատարուած նորոգութիւններուն համար: Իբրեւ Ատենապետ Ս. Յարութեան Տաճարի Նորոգութեան Համագգային Ցանձնախումբի, Տիար Գալուֆնան մօտէն հետաքրքրուեցաւ նորոգութիւններուն ընթացքով եւ ուրախ եղաւ իրեն տրուած բացատրութիւններէն:

Թանկացին հիւրերը այցելեցին զանազան սրբալայրեր եւ հարազատի հետաքրքրութեամբ ծանօթացան Ս. Յակոբեանց վանքի առօրեայ կեանքին, այցելեցին հաստատութիւնները, բայց իրենց հագածութեան առարկան հան-



Տէր եւ Տկն. Հ. Գալուֆնան եւ Տկն. Ֆ. Սարգիսեան՝ Պատրիարք Սրբազան Հօր, Գերշ. Տ. Շահէ Նպս. Անէմեանի եւ Ժառանգաւորաց վարժարանի ու Ընծայարանի ուսանողներուն հետ, Պատրիարքարանի Դահլիճին մէջ:

դիսացան Ժառանգաւորաց վարժարանն ու Ընծայարանը, ուր այս տարի 42 սաներ յաջողութեամբ եւ խանդավառութեամբ կը հետեւին դասընթացքներուն:

Տէր եւ Տիկ. Գալուֆնան եւ Տկն. Սարգիսեան գեհունակ սիրտով հրաժեշտ առին Ն. Ամենապատուութենէն եւ դարաւոր աւանդութիւններով ու պատմութեամբ հարուստ Ս. Յակոբեանց վանքէն:

Տիար Հայկ Գավալեան, անխնայ Ատենայեցի Ս. Յարութեան Տաճարի Նորոգութեան Համագրային Յանձնախումբին, ծնած է Պալիս 1875-ին: Կեդրոնականէն եւ պետական Գեղարուեստից վարժարանէն շրջանաւարտ ըլլալէ ետք, 1895-ի գէպքերուն պատճառաւ կը հեռանայ ծննդավայրէն եւ կ'անցնի Ամերիկա եւ Նիւ Եորքի մէջ 1915-ին կը հիմնէ Bingham Photo-engraving Company-ն, որ ներկայիս կը համարուի տպագրական կազմակերպութիւն (ֆիլմ) աշխարհի մեծագոյն ընկերութիւններէն մին:

Անկախ իր առօրեայ բազմաթիւ գրադարմներէն եւ պարտականութիւններէն, Տիար Գավալեան շատ կանուխ մաս առած է Ամերիկահայ հանրային կեանքին մէջ: Իր անհատնում եռանդը եւ աշխատելու անխնայ կամքը զինք հասցուցած են Ամերիկահայութեան բոլոր պէտքերուն: Նիւ Եորքի Ս. Խաչ Հայաստանեայց եկեղեցին շատ քան կը պարտի իր ցանկերուն եւ նիւթական օժանդակութեան: Սակայն Տիար Գավալեանի փառքը կը կազմէ Նիւ Եորքի Մայր Տաճարի կառուցումը, որուն համար տարիներով զգի ի բռնի աշխատած է եւ գոյացուցած անհրաժեշտ գումարը: Բայց մանաւանդ իբրեւ Ատենայեցի Ս. Յարութեան Տաճարի Նորոգութեան Համագրային Յանձնախումբի, Տիար Գավալեան երեսն քերած է իր տաղանդին ու եկեղեցասիրութեան բոլոր երեսները՝ յաջողութեամբ գլուխ հանելու Հայութեան համար այնքան կենսական նշանակութիւն ունեցող նորոգութիւնները Երուսաղէմի Ս. Յարութեան Տաճարին մէջ:

Ի վարձատրութիւն իր անընդմէջ ծառայութիւններուն եւ նուիրումին, Տիար Հ. Գավալեան արժանացած է էջմիածնի Ս. Գրիգոր Լուսաւորչի Առաքին կարգի շքանշանին եւ Երուսաղէմի Հայ Պատրիարքութեան Ս. Յարութեան Տաճարի ադամանդակաւ շքանշանին:

